Հանրապետական
Մանկավարժահոգեբանական
կենտրոն

<<Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում >> ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ <<Երևանի Ն.Աղբալյանի անվան թիվ 19 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ

Առարկա՝ Հայոց եկեղեցու պատմություն
Թեմա՝ Աշակերտների՝ ինքնուրույն գործելու և ստեղծագործական կարողունակությունների զարգացումը Հայոց եկեղեցու պատմության դասավանդման ընթացքում
Վերապատրաստող, մենթոր՝ Գոռ Մսրիկյան
Ուսուցիչ՝ Աննա Պողոսյան

Երևան 2022

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման հետ կապված՝ կրթական համակարգը հայտնվեց լուրջ ճգնաժամի մեջ, քանի որ ուսուցիչն ու դասագիրքը դադարեցին լինել գիտելիքի և տեղեկատվության միակ աղբյուրը: Ժամանակակից հասարակության լիարժեք անդամ լինելու, տեղեկատվական և դինամիկ զարգացող թվային դարաշրջանում տեղ ունենալու և զարգանալու համար այսօր հարկավոր են ոչ թե սոսկ հանրագիտարանային գիտելիքներ, այլ ստեղծագործական միտք և նախաձեռնողականություն: Շահում է նա, ով գիտելիքների պաշարի հետ ունի նաև որոշակի հմտություններ, ստեղծված իրավիճակում կշռադատելու, համադրելու և հակադրելու, ճիշտ և արագ կողմնորոշվելու, ինքնուրույն գործելու կարողություններ: Ուստի մեր նպատակն է դաստիարակել երիտասարդ, ով իր կյանքում կարող է ինքնուրույն որոշումներ կայացնել, իրադարձությունների շուրջ եզրահանգումներ անել: Այս առումով հայոց եկեղեցու պատմության դասերը առանձնահատուկ են, քանի որ հոգևոր կյանքի, պատմական ցանկացած դեպք ուսումնասիրելու և հասկանալու, պատճառահետևանքային կապերը վերհանելու համար աշակերտից պահանջվում է ինքնուրույնություն, նախաձեռնողականություն՝ լրացուցիչ նյութեր ուսումնասիրելու և ստեղծագործական միտք՝ ուսումնասիրած նյութը յուրովի ընկալելու և մեկնաբանելու համար:

Բացի այդ, տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվ օգտագործողներ հանդիսացող դպրոցականները ուսուցման սոսկ ավանդական ձևերի կիրառմամբ չեն բավարարվում, ուստի նախկին մեթոդները այլևս արդյունավետ չեն, քանի որ ժամանակակից դպրոցի աշակերտին հետաքրքրելու և նրան դեպի ուսումը շահագրգռելու, հոգևոր մակարդակը բարձրացնելու ստեղծագործական մտածողության զարգացման համար պետք է կիրառել նորագույն մանկավարժական և տեխնոլոգիական միջոցներն ու նրանց ընձեռած հնարավորությունները՝ չանտեսելով, սակայն, ավանդական մեթոդների հնարավորությունները:

Աշակերտի ստեղծագործական կարողությունների զարգացման և նրա մոտ դասի նկատմամբ հետաքրքրությունը պահելու համար պարտադիր է դարձել զանազան մուլտիմեդիական միջոցների, ինտերակտիվ քարտեզների, տեսասահիկների կիրառումը դասի ժամանակ, աշակերտների ակտիվ ուսուցման կիրառումը, աշակերտին սոսկ ուղղություն տալով՝ նրան ինքնուրույն որոնողական աշխատանքի մղելն ու դասից դուրս աշակերտի ինքնուրույն աշխատանքի խթանումը, քանի որ ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման

ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում:

Վերոնշյալը հիմնավորում է թեմայի արդիականությունն ու ուսումնասիրման անհրաժեշտությունը:

Հետազոտության հիմնական վարկածի համաձայն նորագույն մանկավարժական տեխնոլոգիաների՝ ակտիվ ուսուցման մեթոդների և համակարգչային տեխնոլոգիաների հնարավորությունների համադրված կիրառման արդյունքում խթանվում է աշակերտի ստեղծագործական միտքը, ուսումնական նախաձեռնողականությունը, ինքնուրույն գործելու կարողությունը և քրիստոնեական մոտեցումները:

Աշխատանքի կատարման ընթացքում օգտագործվել են տեսական հետազոտության մեթոդներ՝ մանկավարժական և հոգեբանական հետազոտությունների, գիտական գրականության ուսումնասիրություն, ժամանակակից տեսությունների վերլուծություն, համադրում և ընդհանրացում:

Մեր հետազոտական աշխատանքի հիմնական նպատակը պարզելն է, թե Հայոց եկեղեցու պատմություն առարկայի դասավանդումը որքանով է նպաստում աշակերտների ինքնուրույնությանը և ստեղծագործական կարողունակությունների զարգացմանը:

Ելնելով հետազոտության նպատակից՝ առաջադրվել են հետևյալ հիմնական խնդիրները՝

- ուսումնասիրել արդի կրթության համակարգերի նորարարական մոտեցումներին նվիրված տեսությունները, անձի մասնագիտական զարգացման վերաբերյալ գիտական և գիտամեթոդական գրականությունը,
- ուսումնասիրել մանկավարժական տեխնոլոգիա հասկացությունը, ավանդական և ակտիվ մանկավարժական տեխնոլոգիաների տարբերությունները,
-լուսաբանել ուսուցման գործընթացում ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների ներդրման առանձնահատկությունները,
- ուսումնասիրել ստեղծագործական մտածողության զարգացման տեսական հիմքերն ու ժամանակակից տեղեկատվական-կրթական համակարգի ընձեռած հնարավորությունները;
- լուսաբանել հայոց եկեղեցու պատմության դասավանդման ընթացքում կիրառվող մոտեցումներն ու դասավանդման մեթոդները, որոնք նպաստում են աշակերտի ինքնուրույն մտածողության զարգացմանը և կառուցողական վերլուծությանը:

Մեր աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու պարագրաֆներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

ՊԱՐԱԳՐԱՖ 1: ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՇԱԿԵՐՏԱԿԵՆՏՐՈՆ ՄՈՏԵՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՈՐԾԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, վերլուծական կարողությունները, ստեղծագործական ունակությունները հատկանիշներ են , որոնք անձի մեջ ձևավորվում են տարիների ընթացքում: Ցանկացած դաս պետք է միտված լինի երեխային ոչ միայն գիտելիք տալուն, այլև առաջին հերթին վերլուծական կարողություններ ձևավորելուն:

Ինքնուրույնության համար անհրաժեշտ նախապայմաններ են ներքին ազատությունը, որոշումներ կայացնելը, պատասխանատվության գիտակցումը:

Հայոց եկեղեցու պատմության դասավանդման ընթացքում ուսուցիչը ներկայացնում է Հայոց եկեղեցու առաքելությունը, պատմական տարբեր իրավիճակներում եկեղեցու ինքնուրույն գործելու կարողությունը, պետականությունից զրկված հայ ժողովրդին առաջնորդելու, պետության բացակայության պայմաններում պետական գործառույթները ստանձնելու դժվարին պատասխանատվությունը և այդ օրինակով մղում աշակերտին լինել ինքնուրույն և ունենալ պատասխանատվության զգացում:

Ժամանակակից աշխարհում պահանջված է այն մասնագետը, ով ստեղծագործական միտք ունի, ինտելեկտուալ զարգացած է, կարող է ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ, հարմարվել հասարակության անընդհատ փոփոխվող իրավիճակներին, կարող է գործնականում կիրառել ստացած գիտելիքները, լուծել առաջացող խնդիրները ռացիոնալ և ոչ ստանդարտ եղանակներով: Այս ամենի հիմքը դրվում է դպրոցում, որտեղ յուրաքանչյուր առարկայի դասավանդում ընդհանուր հիմնական մեթոդների հետ պահանջում է ժամանակակից մոտեցում՝ աշակերտի ստեղծարար միտքը խթանելու, ինքնուրույն հետազոտության իրականացման խնդիրներ առաջադրելու և լուծելու համար:

Ստեղծագործական միտքը կապված է առաջընթացի գաղափարի հետ, ստեղծագործականությունը ենթադրում է ստանդարտացման չենթարկվող խորը անհատական գործընթաց, որտեղ անհատը հանդես է գալիս ոչ միայն որպես օբյեկտ, այլ նաև որպես ինքնահիրացման և ինքնազարգացման սուբյեկտ:

«Ստեղծագործություն» կատեգորիան, որը կապում է ստեղծագործության անձնական և գործունեության ասպեկտները, ընկալվում է որպես «մարդու ստեղծագործական հնարավորություն, որը կարող է դրսևորվել մտածողության, զգացմունքների, հաղորդակցության, գործունեության որոշակի տեսակների մեջ, բնութագրում է անհատականությունը որպես ամբողջություն կամ առանձին ասպեկտներ,

գործունեության արտադրանք, դրանց ստեղծման գործընթացը»[1]: Ստեղծագործական մոտեցման կարևորությունը հայոց եկեղեցու պատմության դասավանդման ընթացքում ուսումնական գործընթացի հաջողության և ընկալման գրավականն է, քանի որ ստեղծագործական ունակությունը թույլ է տալիս մարդուն կատարելագործվել և իրացնել իրեն նոր պայմաններում, դրսևորել հոգևոր մակարդակ:

Մի շարք հանրահայտ ուսուցիչների և հոգեբանների (Լ.Ս. Վիգոտսկի, Վ.Վ. Դավիդովա, Դ.Բ. Էլկոնինա, Լ.Վ. Զանկով) կարծիքով ստեղծագործական մտածողության ձևավորման, ճանաչողական գործունեության, աշակերտի ստեղծագործական որոնման, գործունեության սուբյեկտիվ փորձի կուտակման համար հսկայական նշանակություն ունի կրթական գործունեությունը:

Ինքնուրույն գործելու, ստեղծագործական մտածողության և երևակայության զարգացման համար աշակերտների մոտ անհրաժեշտ է ձևավորել հետևյալ հմտությունները.

- տարբեր հիմքերով առարկաները և իրավիճակները դասակարգելու ունակություն.
- պատճառահետևանքային կապեր հաստատելու կարողություն.
- բացահայտել փոխհարաբերությունները և գտնել նոր կապեր համակարգերի միջև և կատարել կանխատեսումներ, ենթադրություններ և ճանաչել զարգացող համակարգը.
- բացահայտել ուսումնասիրվող օբյեկտների հակասությունները.
- հաղթահարել մտածողության հոգեբանական իներցիան և սովորել որոշումներ կայացնել, կողմնորոշվել երևակայական տարածության մեջ և այլն:

Վերը շարադրված կարողությունները ուսուցիչը կարող է խթանել աշակերտի մոտ՝ ցուցաբերելով անհատական մոտեցում և կիրառելով նորագույն մանկավարժական մեթոդներ, ինչի արդյունքում աշակերտի մոտ կձևավորվի համակարգային դիալեկտիկական մտածողություն[2]: Այստեղ մեզ օգնում են մեծ հոգեբան-մանկավարժների աշխատություններն ու հետազոտությունները, որոնցից մեկը Ժ. Պիաժեն է: Ժամանակակից ակտիվ ուսուցման կրթական հայեցակարգին հիմնասյուներից մեկը Ժան Պիաժեի ճանաչողական տեսությունն է, որը կրթական օջախներում կարող ենք բնութագրել որպես ուսուցում հետազոտության միջոցով[3]: Պիաժեի համաձայն մտավոր զարգացումը կախված է կառուցողական գործունեությունից՝ չնայած այն բոլոր սխալներին, որ այդ ընթացքում երեխան կարող է անել, և անկախ դրա կատարման

[1]Большой психологический словарь / Сост. И общ. Ред. Б.Мещеряков, В.Зинченко – Спб.: Прайм-ЕВРОЗНАК, 2004. – 672 стр

[2]Хуторской А.В. Современная дидактика. Учебник для вузов. Санкт-Петербург 2001г. - 345 стр

[3]Такман Б.У., Педагогическая психология. Пер. с англ. - М.: «Прогресс», 2002. էջ 204

համար անհրաժեշտ լրացուցիչ ժամանակից: Սա հիմնավորվում է նրանով, որ ակկոմոդացիան և ասսիմիլյացիան պահանջում են, որ աշակերտը ակտիվ լինի, ոչ թե պասիվ, քանի որ խնդիրների լուծման համար որոշումների կայացման կարողությունները հնարավոր չէ ուղղակի սովորեցնել դասավանդման միջոցով, դրան երեխան պետք է հասնի ինքնուրույն:

Ժան Պիաժեի ճանաչողական տեսության կիրառման որոշակի դրսևորում է վերջին ժամանակներում կրթության ոլորտում հաճախ օգտագործվող «աշակերտակենտրոն» կամ «անձնակենտրոն» ուսուցումը, որն անհրաժեշտություն է հայոց եկեղեցու պատմություն առարկայի դասերի կառուցման ընթացքում, եթե ուսուցչի նպատակը ինքնուրույն միտք ունեցող սերունդ դաստիարակելն է:

«Աշակերտակենտրոն ուսուցում» եզրույթն այսօր իր հաստատուն տեղն է գտել մեր կրթական ոլորտում, սակայն անձնակենտրոն կամ աշակերտակենտրոն ուսուցումը հաճախ շփոթում կամ նույնացնում են անձնակողմնորոշիչ ուսուցման հետ: Կրթական բարեփոխումների պայմաններում անհրաժեշտություն է առաջանում հստակեցնել անձնակողմնորոշիչ ուսուցման տեսական խնդիրները և մշակել մանկավարժական այդ մոդելին համապատասխան կրթական տեխնոլոգիաներ: Ժամանակակից կրթությունից ակնկալվող վերջնական արդյունքը կախված է նաև այն բանից, թե ինչը կսահմանվի որպես կրթության հիմնական նպատակ ու վերջնարդյունք, և ինչ մեթոդներ ու հնարներ կկիրառվեն դրանց ձեռք բերման համար: Դրանով է պայմանավորված նաև ուսուցման գործընթացի սուբյեկտի և օբյեկտի՝ ուսուցչի ու աշակերտի փոխհարաբերությունների բնույթը, որն էլ արդյունքում պայմանավորում է աշակերտի մոտ ստեղծագործական մտքի զարգացման խթանումը կամ հակառակը:

Առանձնացնում են ուսուցման գործընթացի բովանդակության, դրա կազմակերպման, նպատակի ու մեթոդների նկատմամբ տարբեր երկու մոտեցումներ, որոնք հակադրվում են միմյանց: Դրանք են գիտելիքային և գործունակ մեթոդները:

Առաջին մոտեցման համաձայն աշակերտն այստեղ չի ցուցաբերում ակտիվություն և նախաձեռնողականություն: Բ.Ձ.Բադմաևը ուսուցման գործընթացի նկատմամբ այս մոտեցումն անվանում էր «գիտելիքային»: Գիտելիքային մոտեցումը հավասարության նշան էր դնում «իմանալ» և«հիշել» բայերի միջև: Այսինքն՝ խնդիրը լուծելու համար նա փորձում էր միայն հիշել, մտապահել այդ խնդրի լուծման ձևը: Ուսուցման գործընթացի նկատմամբ այս մոտեցումն իրականացվում է հետևյալ մեխանիզմներով՝ գիտելիքների, ուսումնական նյութի հաղորդում և ուսումնական նյութի մշակում:

Երկրորդ մոտեցման համաձայն սովորողն ուսումնական գործընթացում ոչ թե անգիր է անում ուսումնական նյութը և մեխանիկորեն մտապահում, այլ սովորելով՝

փորձում է կիրառել այն, ինչ-որ բան անել այդ գիտելիքի հետ և իրականացնել որևէ գործունեություն:

Մանկավարժական գիտության զարգացումը, կրթական համակարգի բարեփոխումները պարտադրեցին, որ տեսական աշխատանքներում այսօր խոսվի ուսուցման գործունային մոտեցման մասին, և այն ներկայացվի որպես այսօրվա հրամայական:

Հայոց եկեղեցու պատմության ուսուցման գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել անձի դրդապատճառները, պահանջմունքները, ընդունակությունները, հետաքրքրությունները, իմացական գործընթացների զարգացման որակները: Անձնակողմնորոշիչ ուսուցման իրականացման ընթացքում Հայոց եկեղեցու պատմություն սովորող աշակերտը մշտապես հանդես է գալիս որպես գործող անձ, մասնակից, ոչ թե՝ հանդիսատես, հաճախ էլ սեփական կրթության գործընթացի նախաձեռնող:

Անձնակողմնորոշիչ ուսուցման հիմնախնդիրներն ուսումնասիրող Կ. Ուշինսկին իր «Մարդը որպես դաստիարակության առարկա» աշխատությամբ մշակել է մի ընդարձակ մեթոդիկա՝ ուղղված երեխաների նկատմամբ անհատական մոտեցման հնարքներին: Նա վստահ էր, որ եթե մանկավարժությունը ցանկանում է մարդ դաստիարակել, ապա այն պետք է նախ և առաջ փորձի բոլոր առումներով ճանաչել մարդուն[4]: Այս նույն մոտեցման միջոցով հնարավոր է եկեղեցու պատմության դասավանդումը հասցնել ուսուցչի կողմից նվազագույն միջամտության և մենթորության՝ թողնելով, որ աշակերտը ինքնուրույն ձգտի հասնել ճշմարտության, կարողանա գնահատել կրոնը և դրա գաղափարները:

Անձնակողմնորոշիչ տեխնոլոգիաների հիմքում աճող մարդու ինքնատիպ, ամբողջական անձն է, որը ձգտում է իր հնարավորությունների առավելագույն իրացմանը (ինքնիրացմանը), պատրաստակամ է ընդունել նոր փորձը, կարող է կատարել գիտակցված և պատասխանատու ընտրություն կյանքի տարբեր իրավիճակներում: Անձնակողմնորոշիչ տեխնոլոգիայի հանգուցային հասկացություններն են՝ «զարգացումը», «ինքնուրույնությունը», «ստեղծագործականությունը»[5]:

Ստեղծագործականություն զարգացնող մանկավարժական տեխնոլոգիաները տարբերելու ամենագլխավոր հատկանիշներից մեկը Գ. Սելևկոն համարում է դեպի երեխան ունեցած նրա կողմնորոշման չափը, սահմաններն ու մոտեցումները: Կամ տեխնոլոգիան բխում է մանկավարժության ներուժից, միջավայրից և այլ գործոններից, կամ գլխավոր գործող անձ է ճանաչում երեխային, կողմնորոշված է դեպի նրա անձը:

---

[4]Մանկավարժական ընտիր երկեր : Երկու հատորով / Կ.Դ. ՈՒշինսկի; Խմբ.՝ Վ.Յա. Ստրումինսկի, Ն.Ա. Սունդուկով, Դաստիարակության հարցեր, հ. 1, 1958, 705 էջ, էջ 23:

[5]Селевко Г. К., Традиционная педагогическая технология и ее гуманистическая модернизация, М., 2005, с.69

Ե. Ստեպանովը[6] սահմանում է, որ անձնակողմնորոշիչ մոտեցումը «Մանկավարժական գործունեության մեջ այնպիսի մեթոդաբանական կողմնորոշում է, որը հնարավորություն է ընձեռում հենվել հասկացությունների, գաղափարների և գործունեության միջոցների փոխկապակցված համակարգի վրա և օժանդակել երեխայի անձի ինքնաճանաչման, ինքնաձևավորման և ինքնիրացման գործընթացներին, ինչպես նաև նրա անկրկնելի անհատականության զարգացմանը»:

Այսպիսով, անձնակողմնորոշիչ ուսուցման առանցքում դրվում են երեխայի անձը, նրա ինքնատիպությունը, արժեքը, յուրաքանչյուր սովորողի սուբյեկտիվ փորձը: Անձնակողմնորոշիչ ուսուցման ուշադրության կենտրոնում գտնվում է լիարժեք ներդաշնակ անձնավորությունը, որը ձգտում է ինքնադրսևորման, պատրաստ է ընդունել նորը, կարող է ընտրություն կատարել կյանքի տարբեր /ոչ ստանդարտ/ իրավիճակներում և իր ընտրության համար լիարժեք պատասխանատվություն է կրում:

Այսպիսով, ժամանակակից կյանքում այլևս բավարար չեն միայն գիտելիքներ, կարողություններ, հմտություններ ձեռք բերելը կամ մարդկային գործունեության ձևավորված միջոցներ յուրացնելը: Այսօր ուսուցման իրականացման ընթացքում առավել կարևորվում են ստեղծագործական միտքը և մոտեցումները: Առաջին պլան են մղվում մտավոր զարգացման խնդիրները և սովորողի ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը: Անձնակողմնորոշիչ ուսուցումը սովորողին հնարավորություն է տալիս իրականացնել ակտիվ ճանաչողական գործունեություն՝ ստեղծագործական, ինքնուրույն նպատակային աշխատանքի միջոցով: Դեռևս Յ. Հ. Պեստալոցցին ասում էր. «Իմ աշակերտները նորը ոչ թե ինձնից կիմանան, այլ ինքնուրույն կբացահայտեն: Իմ հիմնական խնդիրը կլինի օգնել նրանց ինքնադրսևորվելու, զարգացնելու սեփական մտահղացումները»[7]:

Անձնակողմնորոշիչ ուսուցման ընթացքում էական փոփոխության են ենթարկվում ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները:

Եթե ավանդական ուսուցման մեջ աշակերտը դիտարկվում է որպես օբյեկտ, որին պետք է ուսուցանել այնպես, ինչպես մի անոթ, որի մեջ ուսուցիչը պետք է գիտելիքներ լցնի, ապա անձնակողմնորոշիչ ուսուցումն աշակերտին դիտարկում է որպես ուսուցման սուբյեկտ՝ ուսուցչի գործընկեր, որը սեփական կարծիքի, սխալների, բանավիճելու և այլ իրավունքներ ունի: Ավանդական ուսուցման պայմաններում բարձր գնահատվող՝ լուռ, հնազանդ և կատարող աշակերտն այլևս չի կարող դառնալ ուսուցչի գործընկերը: Ուսուցիչն էլ իր հերթին նոր դեր է ստանձնում և ձեռք բերում նոր գործառույթներ՝ ոչ

---

[6]Նույն տեղում

[7]Полат Е. С. и др., Новые педагогические и информационные технологии в системе образования: Учеб. Пособие для студ. пед. Вузов и системы повыш. квалиф. пед. кадров, М.: изд. центр “Академия”, 2005, с. 19.

պակաս կարևոր, քան ավանդական ուսուցման ժամանակ. նա հրաժարվում է պատրաստի, սոսկ դասագրքային գիտելիք մատակարարողի դերից և ստանձնում ուսուցման համապատասխան պայմաններ ապահովողի, սովորողների ակտիվ և ինքնուրույն ճանաչողական գործունեության կազմակերպչի և ավագ խորհրդատուի դեր:

Ուսուցչի մասնագիտական կարողություններն արդեն ուղղված են ոչ թե պարզապես սովորողների գիտելիքների և կարողությունների պարզ վերահսկմանը, այլ նրանց գործունեության հայտորոշմանը /դիագնոստիկա/: Այսինքն՝ ուսուցիչը պետք է կարողանա ճիշտ ժամանակին, իր բարձր մասնագիտական կարողություններով նվազագույնի հասցնել հնարավոր դժվարությունները՝ գիտելիքների ձեռքբերման և կիրառման գործընթացում, կարողանա ուղղորդել համապատասխան ռեսուրսներ կիրառելու, համապատասխան գրքեր խորհուրդ տալու, ակտիվ քննարկումներ կազմակերպելու միջոցով: Ուսուցչի այս նոր դերը շատ ավելի բարդ ու պատասխանատու է և նրանից պահանջում է բարձրակարգ վարպետություն: Այսպիսով, եթե ավանդական ուսուցման գործընթացում ուսուցիչը կենտրոնական դերում էր. ինքն էր հիմնականում խոսում, բացատրում, ներկայացնում, ապա անձնակողմնորոշիչ ուսուցման ընթացքում կենտրոնական դեր են ստանձնում սովորողները: Նրանք անընդհատ ներգրավված են տարբեր առաջադրանքների կատարման մեջ: Եկեղեցու պատմության ուսուցչի խնդիրն է դառնում աջակցել, ուղղորդել սովորողներին լսելու, նպաստել նրանց գործուն մասնակցությանը դասին: Տարբեր ծավալի տեղեկատվության մեխանիկական մտապահման ու բառացի վերարտադրման փոխարեն խրախուսվում են սովորողների համագործակցային աշխատանքը, միմյանց լսելու, միմյանցից սովորելու կարողություններն ու հմտությունները: Այսպիսով՝ անձնակողմնորոշիչ ուսուցումը հայոց եկեղեցու պատմության դասավանդման ընթացքում կարևոր նախապայման է աշակերտի ստեղծարար միտքն ու ինքնուրույն նախաձեռնողականությունը զարգացնելու համար, քանի որ ուսուցիչ-աշակերտ հարաբերություններում գերիշխող է ոչ թե դասավանդող ուսուցիչը, այլ սովորողների գործուն մասնակցությունը ուսուցման գործընթացին և նրանց ինքնուրույն ճանաչողական գործունեությունը, իսկ ուսուցիչ-դասագիրք-աշակերտ ավանդական հարացույցը փոխարինվում է աշակերտ-դասագիրք-ուսուցիչ նոր, առավել արդյունավետ մոտեցմամբ:

Հայոց եկեղեցու պատմության ուսուցման ընթացքում անձնակողմնորոշիչ ուսուցման կարևոր առանձնահատկություններն են՝ փոխհաղորդակցության և երկխոսության լայն հնարավորությունը, ուսուցման գործընթացին սովորողի գործուն մասնակցությունը, սովորողին տրամադրվող մեծ ազատությունը՝ ինքնուրույն որոշումներ կայացնելու, ստեղծագործելու, ուսումնական նյութի ընտրության և մի շարք այլ հարցերում:

Գ.Մ.Ռոմանցևի կարծիքով՝ մանկավարժական գործունեության մեթոդաբանական հիմք պետք է համարել այն մոտեցումը, որ սովորողը միաժամանակ հանդես է գալիս և որպես օբյեկտ, և որպես սուբյեկտ:Այս դեպքում միայն, ըստ էության, ուսուցումը կարող է դառնալ անձնակողմնորոշիչ, այսինքն՝ ուսումնական գործունեությունը կլինի նպատակաուղղված դեպի անձը, նրա պահանջմունքները, հետաքրքրություններն ու ընդունակությունները:

Հայոց եկեղեցու պատմության ուսուցիչը պարտավոր է ձևավորել իր սաների մտածողության մեթոդը և ոճը, գիտելիքների ինքնուրույն յուրացման և կիրառման եղանակները, նրանց զինել վերլուծման, գիտելիքների ընդհանրացման ու գնահատման գիտական մեթոդներով, այսինքն՝ ձևավորել աշակերտների գիտական աշխարհայացքը: Այստեղից էլ բխում են ուսուցչի անձին, նրա ինքնակրթությանը առաջադրվող այլ պահանջներ:

Մտածողության ոճի դաստիարակությունը ոչ թե լոկ գիտական գիտելիքների հաղորդում է, այլ մտքի որակների, մտավոր աշխատանքի մեթոդների ու հնարքների ձևավորում: Իր սաների մեջ այդ որակները կարող է պատվաստել այն մանկավարժը,որը օժտված է դրանցով:

Ուսուցիչը պետք է պարզ պատկերացում ունենա թե՛ իր և թե՛ իր սաների ուսումնական գործունեության մոդելի մասին: Նա պարտավոր է տիրապետել մտածողության համապատասխան մեթոդներին ու մտավոր աշխատանքի իր ոճով օրինակ ծառայել աշակերտներին:

ՊԱՐԱԳՐԱՖ 2: ԱՇԱԿԵՐՏԱԿԵՆՏՐՈՆ ԴԱՍԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուսումնական գործունեությունն իրենից ներկայացնում է նպատակամղված, հստակ կազմակերպված, բովանդակային առումով հարստացված և մեթոդապես հագեցած՝

- ճանաչողական և դաստիարակչական շփման,
- փոխազդեցության,
- սովորողի և սովորեցնողի փոխհարաբերությունների համակարգ[8]:

Ուսուցման ձևը ուսումնական գործընթացի՝ ժամանակային շրջանակով սահմանափակված առանձին օղակի կազմակերպումն է: Այն ուսուցման ձև է և միաժամանակ ուսուցման կազմակերպման ձև: Ուսումնական գործընթացի հաջողությունն ու արդյունավետությունը կախված են դրա կազմակերպման տարբեր ձևերի հմուտ օգտագործումից:

Ինչպես նախորդ գլխում նշվեց, եկեղեցու պատմության դասավանդման ընթացքում ստեղծագործական մոտեցման զարգացման համար սովորական ավանդական մեթոդները իրենց չեն արդարացնում, հարկավոր են նոր մեթոդներ և ուսուցման ձևեր՝ թվային դարաշրջանում աշակերտին հետաքրքրելու համար:

Հետևաբար պատմության դասը ոչ թե պետք է կառուցվի ուսուցիչ-դասագիրք-աշակերտ սկզբունքով, այլ առաջադրանքների համակարգի, որոնք ներառում են ստեղծագործական գործունեության տարբեր տեսակներ՝ դեպքերի, անձանց, իրավիճակների ուսումնասիրություն նոր տեսանկյունից: Ընդ որում առաջադրանքների համակարգումը կախված է առարկայից և տվյալ թեմայի բարդության մակարդակից: Առաջադրանքների կատարման ժամանակ դեռահասների համար անհրաժեշտ մեթոդները որոշվում են՝ կախված դրանց տեսակից և բարդության աստիճանից: Ուստի պատրաստի դասի պլանների փոխարեն, որոնք սահմանափակում են ուսուցչի ստեղծագործական ունակությունները, առաջարկում ենք անցկացնել դասեր, որոնք ուղղված են ստեղծագործական ունակությունների զարգացմանը և ուսումնական նպատակներին հասնելուն:

Դասի պայմանները պետք է համապատասխանեն ստեղծագործության տվյալ մեթոդներին, առաջադրանքները պետք է կազմվեն՝ հաշվի առնելով աշակերտի զարգացման ներկա մակարդակը և տարիքային առանձնահատկությունները: Ըստ այդ պահանջների՝ կազմվում են փոխկապակցված ստեղծագործական առաջադրանքներ՝ ուղղված երևույթների, իրավիճակների և առարկաների նոր որակի ստեղծմանը,

[8]Бордовская Н.И., Реан А.А. Педагогика. Учебник для вузов СПб: Издательство "Питер", 2000. - 304 с. - (Серия "Учебник нового века")

իմացությանը, օգտագործմանն ու վերափոխմանը, որոնք ուղղված են եկեղեցու պատմության միջոցով աշակերտի ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Հայոց եկեղեցու պատմության մեջ ստեղծագործական առաջադրանքները պետք է բաղկացած լինեն հոգևոր նպատակից, բովանդակությունից, գործունեության և արդյունքի բաղադրիչներից: Առաջադրանքների յուրաքանչյուր խումբ ծառայում է որպես աշակերտի կողմից սուբյեկտիվ ստեղծագործական փորձի կուտակման անփոխարինելի պայման:

Ստեղծագործական առաջադրանքները բնութագրվում են հետևյալ չափանիշներով.

• առաջադրանքի հիմնական խնդրի իրավիճակի բարդությամբ, դրա լուծումը ենթադրող մտավոր գործողությունների բարդությամբ.

• հակասությունների ներկայացման բացահայտ կամ թաքնված ձևերով:

Առաջադրանքի համակարգի բովանդակությունը կարելի է բաժանել երեք մակարդակի առավել դյուրինից դեպի բարդ:

Առաջին մակարդակի ստեղծագործական առաջադրանքները պարունակում են խնդրահարույց իրավիճակ կամ խնդրահարույց խնդիր, առաջարկվում է կիրառել տարբերակների ընտրության մեթոդը կամ ստեղծագործության էվրիստիկ մեթոդները, որոնք օգտագործվում են արդյունավետ տարածական երևակայություն և ստեղծագործ միտք ձևավորելու համար:

Հաջորդ մակարդակում առաջադրանքները պետք է հիմնված լինեն արդյունավետ երևակայության, համակարգային մտածողության և ստեղծագործական նոր մեթոդների վրա: Երկրորդ մակարդակի առաջադրանքներում օբյեկտների տակ թաքնված են համակարգի և համակարգի ռեսուրսների հասկացությունները: Առաջադրանքները պարունակում են կա՛մ անորոշ խնդրահարույց իրավիճակ, կա՛մ բացահայտ հակասություններ, որոնք էլ աշակերտը պետք է փորձի լուսաբանել և գտնել մտքի տրամաբանությունը: Այս մակարդակի առաջադրանքների նպատակը համակարգային մտածողության հիմքերի ձևավորումն է:

Առաջադրանքների երրորդ և ամենաբարձր մակարդակը պետք է կիրառել՝ դիալեկտիկական մտածողության, երևակայությունը և ստեղծագործական էվրիստիկական և ալգորիթմական մեթոդների գիտակցված օգտագործման խթանման համար: Բնական է, որ վերջին մակարդակը հնարավոր է կիրառել առավել բարձր դասարաններում՝ նախորդ տարիներին առաջին երկուսի հաջող կիրառման ֆոնին:

Հայոց եկեղեցու պատմության դասերի ընթացքում աշակերտին առաջարկվում են հետևյալ ստեղծագործական առաջադրանքները, որոնց իրականացման համար պահանջվում է նաև ակտիվ նախաձեռնողական որոնողական ինքնուրույն գործունեություն.

• «Ուսումնասիրիր քրիստոնեության պատմական անցած ուղին»;
• «Գտիր պատմական դեպքերի շարքի ալգորիթմը»;
• «Հորինիր նոր ձև, որը կփոխի այսօրվա խառնաշփոթը»;
• «Գրիր բանաստեղծություն կամ հեքիաթ, որը կնկարագրի պատմական անձին կամ իրադարձությունը»[9]:

Մեկ ուրիշ դեպքում աշակերտներին հնարավորություն է տրվում ինքնուրույն որոշելու, թե ինչպես իրենք կվարվեին պատմական բարդ իրավիճակներում Հայոց կաթողիկոսների փոխարեն, (օրինակ՝ Մկրտիչ Խրիմյան, Գևորգ Սուրենյանց, Խորեն Մուրադբեկյան, Գևորգ Չորեքչյան) ինչ որոշումներ կկայացնեին ստեղծված պայմաններում, ինչ հետևություններ և եզրահանգումներ կանեին:

Որպես ստեղծագործական մտքի զարգացման քայլ կարելի է դիտարկել նաև աշակերտների ուժերով պատմական որևէ դեպքի բեմականացումը:

Որպես օրինակ 7-րդ դասարանի աշակերտները բեմադրել էին <<Հայոց դարձը >>՝ կերպարանավորելով Գրիգոր Լուսավորչին, Տրդատ 3-րդին, Խոսրովիդուխտին և բազմաթիվ նորադարձ քրիստոնյաների:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դպրոցական բարձր տարիքում ստեղծագործական ոլորտը դինամիկ է և հեշտությամբ ենթակա է շտկման, ուսուցիչը, օգտագործելով եկեղեցու պատմության դասին ճիշտ մոտեցումները, կարող է դրական ազդել դեռահասի ստեղծագործական կարողության զարգացման վրա[10]:

Հայոց եկեղեցու պատմության դասերին դեռահասների ստեղծագործական զարգացման համար առաջարկում ենք.
• չոր փաստեր ներկայացնող ուսուցչի տեղը կիրառել ավագ ուսուցիչ կամ մենթոր մոդելը,
• եկեղեցու պատմության ուսուցումը գրավիչ և ստեղծագործական դարձնելուն ուղղված ժամանակակից մեթոդների կիրառում,
• պատմության դասավանդման նպատակների և խնդիրների պլանավորում՝ հիմնվելով ստեղծագործական գործընթացում աշակերտի ներգրավվածության վրա.
• վստահություն և հարգանք աշակերտի նկատմամբ, ճնշման և քննադատության բացակայություն, պատմության դասերին աշակերտի ձեռք բերած արդյունքների խրախուսում:
• աշակերտների միջև պատասխանատվության բաշխում և ինքնուրույն որոշումներ կայացնելու ունակության զարգացում:

---

[9]Смагулова Н.Т. РАЗВИТИЕ КРЕАТИВНОСТИ ПОДРОСТКОВ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ ИСТОРИИ // Педагогическая наука и практика. 2020. №4 (30). сс. 69-73.
[10]Рыбкин А.Д.. "Особенности применения методов развития креативных способностей личности на уроках истории в средней школе" Инновационная наука, no. 8-1, 2015, сс. 138-142.

Ընդհանրացնելով ասվածը, կարող ենք նշել, որ ստեղծագործության զարգացման կարևոր պայմանը հայոց եկեղեցու պատմության դասավանդման ծրագրերի, մեթոդների, տեխնիկայի օգտագործումն է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի կատարման ընթացքում, ելնելով մեր սահմանված նպատակից և խնդիրներից, ձևավորվել են հետևյալ եզրահանգումները:

- Պիաժեի Ճանաչողական տեսության հիմնադրույթները իրենց արտացոլումն են գտել համագործակցային ուսուցման մեջ, որի արդյունավետությունը պայմանավորված է ուսուցման ակտիվ, ճանաչողական, ինտերակտիվ մեթոդներից և աշակերտակենտրոն ու անձնակողմնորոշիչ ուսուցումից:
- Ստեղծագործական միտքը կապված է առաջընթացի գաղափարի հետ, ստեղծագործականությունը ենթադրում է ստանդարտացման չենթարկվող խորը անհատական գործընթաց, որտեղ անհատը հանդես է գալիս ոչ միայն որպես օբյեկտ, այլ նաև որպես ինքնահիրացման և ինքնազարգացման սուբյեկտ:
- Առանձնացնում են ուսուցման գործընթացի բովանդակության, դրա կազմակերպման, նպատակի ու մեթոդների նկատմամբ տարբեր երկու մոտեցումներ, որոնք հակադրվում են միմյանց: Դրանք են գիտելիքային և գործունակ մեթոդները, ընդ որում առաջինը իրեն գրեթե սպառել է:
- Հայոց եկեղեցու պատմության դասերի ընթացքում չպետք է սահմանափակվի ինքնաբուխ ստեղծագործական գործունեությունը, մտածելակերպը, յուրաքանչյուր աշակերտ պետք է հնարավորություն ունենա արտահայտվել և սեփական տեսակետները պաշտպանել: Հետևաբար ճիշտ հարցադրումներով կառուցված դասը հնարավորություն կտա զարգացնել աշակերտի ստեղծագործական ունակությունները, ձևավորել այնպիսի որակներ, ինչպիսիք են մտքերի ինքնուրույն շարադրման կարողությունը, տարբեր դեպքերի և գրքային նյութի ընդհանրացված ներկայացումը, մտքի ճկունությունը, արդյունքում կբարձրանա եկեղեցու պատմության դասերի մոտիվացիայի մակարդակը և կաճի նորը իմանալու և որոնելու նախաձեռնողականությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մանկավարժական ընտիր երկեր: Երկու հատորով / Կ.Դ. ՈՒշինսկի; Խմբ.՝ Վ.Յա. Ստրումինսկի, Ն.Ա. Սունդուկով, Դաստիարակության հարցեր, հ. 1, 1958, 705 էջ
2. Մխեյան Գ., Ուսուցման արդյունավետության բարձրացման նախապայմաններն ավագ դպրոցում, *Մանկավարժություն*, 6/2014, էջ 49-54
3. Մկրտչյան Մ.: Ուսուցմանկոլեկտիվեղանակիիրականացմանմեթոդաբանական, տեսականևգործնականհարցերը: Երևան, 2011
4. Большой психологический словарь / Сост. И общ. Ред. Б.Мещеряков, В.Зинченко – Спб.: Прайм-ЕВРОЗНАК, 2004. – 672 стр
5. Бордовская Н.И., Реан А.А. Педагогика. Учебник для вузов СПб: Издательство "Питер", 2000. - 304 с. - (Серия "Учебник нового века")
6. Полат Е. С. и др., Новые педагогические и информационные технологии в системе образования: Учеб. Пособие для студ. пед. Вузов и системы повыш. квалиф. пед. кадров, М.: изд. центр “Академия”, 2005
7. Рыбкин А.Д.. "Особенности применения методов развития креативных способностей личности на уроках истории в средней школе" Инновационная наука, no. 8-1, 2015, сс. 138-142.
8. Селевко Г. К., Традиционная педагогическая технология и ее гуманистическая модернизация, М., 2005,
9. Смагулова Н.Т. Развитие креативности подростков в процессе обучения истории // Педагогическая наука и практика. 2020. №4 (30). сс. 69-73.
10. Такман Б.У. Педагогическая психология. Пер. с англ. - М.: «Прогресс», 2002
11. Хуторской А.В. Современная дидактика. Учебник для вузов. Санкт-Петербург 2001г. - 345 стр